ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2021թվականի N 16-Ա

ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 168-Ա որոշումը՝
որոշում եմ.

1. 2021 թվականի մարտի 1-ից ստանձնում եմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունները՝ մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր Համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

2. Ընդունել ի գիտություն, որ Համայնքի ղեկավարի վարձատրությունը կատարվում է համաձայն Համայնքի ավագանու սահմանած պաշտոնային դրույքաչափի:

3.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող անհրաժեշտ
գործառույթներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. մարտի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2021թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով և35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝
որոշում եմ.

1. Լևոն Հովհաննեսի Զավարյանը 2016 թվականի փետրվարի 22-ից ստանձնած լինելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարի պաշտոնը, Համայնքի ղեկավարի պաշտոնավարման՝ օրենսդրությամբ սահմանված 5 տարի ժամկետը լրանալու կապակցությամբ, 2021 թվականի փետրվարի 22-ից համարել դադարեցված Համայնքի ղեկավարի զբաղեցրած պաշտոնը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալ վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. մարտի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2021թվականի N 18-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ)ենթակետով ,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 851210 հաստ.20.05.2002թ.և Լորուտ գյուղի բնակչուհի Լիլիթ Վահանի Խաչիկյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հանգուցյալ Վաղինակ Վահանի Խաչիկյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Լորուտ գյուղի բնակելի տանը (ծածկագիր 06-045-061-000018-001) մակերեսի չափը՝ 0,61քմ և 0,61 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գյուղ Լորուտ,9-րդ փողոց,տուն 31:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

2021 թ.մարտի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2021թվականի N 19-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կադաստրի կոմիտեի վկայականը՝ 1327021 հաստ. 30.06.2004թ.և քաղաքացի Լևոն Գագիկի Մոսինյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Հանգուցյալ Ժենյա Անդրանիկի Մոսինյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Թումանյան քաղաքի բնակարանին (06-004-018-009-001-005)մակերեսի չափը՝ 32,4 քմ տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,7-րդ փողոց, շ.10,բն.5:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

2021թ. մարտի 1
ք.Թումանյան